ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

ք. Գավառ , Կենտրոնական հրապարակ 7
Հեռ. /0264/2-34-31, Ֆաքս /0264/2-34-31
Կայք gegharkunik.mtaes.am
Էլ. փոստ gegharkunik@mtaes.am

N 02/08/250
25 01 2017թ.

<<ԱՐԱ ԱՐԱՔՍ ԳՐՈՒՊ >> ՍՊԸ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Վ. ՄԽԻԹԱՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Մխիթարյան

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) և <<Արա Արաքս Գրուպ>> ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կապալառու) միջև 30.11.2016 թվականին կնքված ՀՀ ԳՄ ԲԸԱՀԱՇՁԲ-16/03-1 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 և 1.2 կետերի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարել է, իսկ Կապալառուն ստանձնել է <<Մարտունու հիվանդանոց>> ՊՓԲԸ-ի մասնաշենքի տանիքի կառուցման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ Աշխատանք)՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին, կանոններին և Աշխատանքի նախագծին համապատասխան:

Համաձայն Պայմանագրի 1.3 կետի աշխատանքների կատարման ժամկետը է սահմանվել 20.12.2016թ.:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ <<Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը, կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը>>:

Քանի որ <<Արա Արաքս Գրուպ>> ՍՊԸ-ն չի կատարել իր պայմանագրային պարտավորությունները, ուստի հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4 կետի <<բ>> և <<գ>> ենթակետերը միակողմանի լուծել 30.11.2016 թվականին կնքված ՀՀ ԳՄ ԲԸԱՀԱՇՁԲ-16/03-1 ծածկագրով գնման պայմանագիրը:

Հարգանքով՝

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Քաղաքաշինության վարչություն
Ա.Զոհրաբյան
Հեռ.՝ (0264) 2-83-54